

որ իրեն բերուին ինչ որ նշխարներ սուրբերու, որոնք Հայաստանէն բերուած էին Զուղայի բնակիչներէն, երբ անոնք Սպահան տեղաւորուած էին, եւ երբ քահանաները շուրջառնելով եւ լոյսերով ու մոմերով նշխարները մեծարանօք ներս բերին, Ապպաս ոտքի ելաւ, համբուրեց նշխարները եւ զանոնք գլխուն վերայ դրաւ, յետոյ շուրջիններուն հրամայեց յարգանօք կանգնիլ այսպիսի սուրբ իրերու ներկայութեամբ, արգարեւ անոնց ցոյց տալով այնքան պատիւ, որքան որ Քրիստոնեայ դահակալ մը դուցէ ցոյց տար:

«Աւելի զարմանալի է՝ Մուսլիման արքայի մը համար, այն, որ Հայ եկեղեցականները անվրդով կը տանէին, մինչ ներկայ եղող երկու Օգոստինեան եղբայրները վայթակղած էին՝ երբ Շահը կը մտադրէ Ս. Հռիփսիմէի նշխարէն կտոր մը նուիրել Եղբայր Ճան Թատտէուսի, եւ ոչ միայն (Շահը) դպաւ այլ եւ սուրբին ոսկորէն կտոր մը իր ձեռքերով կտորեց, եւ զայն մաքուր կտոր մը թուղթի մէջ փաթաթելով, յանձնեց Կարմեղեան Նահանգային Տեղապահին»:(8)

Անդրադարձումը, զոր կ'ուզեմ հոս կատարել, ճշդում մըն է Դաւրիթեցիի վկայութեան վրայ: Դաւրիթեցիին Սոջայ Սաֆարի ողջութեան պատահած կը սեպէ, մինչ, ըստ Կարմեղեան վաւերաթուղթին, ատիկա կատարուած կ'ըլլայ յունուար 16, 1620-ին, այսինքն՝ Սոջայ Սաֆարի մահուընէ երկու տարի վերջ միայն:

Դաւրիթեցի կը հաւաստէ նաեւ, որ Շահը Օգոստինեան եղբայրներու կուտայ Ս. Հռիփսիմէի նշխարին կտորը, մինչ, Կարմեղեան թղթին համաձայն, Կարմեղեանց Տեղապահն է որ կը ստանայ նուէր նշխարը:

Այս եւ ասոր նման սխալներ, սակայն, ահլնկալելի են Դաւրիթեցւոյ պէս ականջալուր պատմութեանց համար: Եւ կը գոհանամ ճշգրտելով, որ Սաֆարի մահուընէ վերջ պատահած է այս գէպը:

Տէր Յովհաննէանց մեղի կուտայ Սոջայ Սաֆարի տապանադիրը:

«Տապան կայ ի շարն գերեզմանատանց ազգատոհմի իւրեանց, ըստ այսմ տապանադիրոյ»:

Այս է շիրիմ դամբարանի, Սոջայ Սաֆար իշխան բարի, Որ է եղեալ այս տապանի: Էր սա ամաց ԾԵ.ի. Կէ աւելորդի.

Սուրբ Խաչի պաք չորեքշաբթի.

Սա աւանդեաց զիւրմ հոգի.

Քրիստոս Աստուած իւրմ ողորմի:9)

Այսպէս, կը վախճանի Սոջայ Սաֆար, որուն համար Դաւրիթեցի կը յիշէ, թէ Ապպաս Մեծ Շահը «առնէր սէր ընդ ազգին Հայոց՝ եւ մեծարանս նոցա. եւ մանաւանդ ընդ Զուղայեցւոյ, որոց գլխաւորի անունն էր Սոջայ Սաֆար, եւ սորին եղբորն՝ Սոջայ Նազար եւ որդւոց սոցին, Մէլիք աղայ, եւ Սուլթանում, եւ Սարֆրազ: Եւ հանապազ ինքն Շահն գայր ի տունս նոցա, ուսէր եւ ըմպէր ընդ նոսա զկերակուրս նոցա առանց խտրելոյ. որպէս սովորութիւն է Պարսից առնել խտրութիւն ընդ քրիստոնէից. այլ եւ ինքն Շահն կոչէր զնոսա ի տուն եւ ի սեղան իւր, եւ պատուէր ընդ մեծամեծս իւր. այլ եւ պատուիրեալ էր իւրոց նախարարաց նոյնպէս առնել»(10):

Նոր Զուղայի թիւ 36 աւետարանին մէջ կայ վերջին ստացողի մը գրչութեան սա յիշատակարանը.

«Զվերջի ստացողի աստուածազարդ եւ հոգէրուխ սուրբ աւետարանիս Պարոն Ֆռանդուլն որ ետ վերստին նորոգել զսայ ի թվին Ռ.Չ (1621) յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց. հաւրն իւրոյ առատաբմիտ եւ հեղահոգի պարանոց պարոն Սոջայ Սաֆարին եւ մօրն Սուլթանիաչէ եւ եղբարց իւրոց սիրեցեալ եւ պատուեալ յաջս թագաւորաց Պարոն Մէլիք ազէն: Պարոն Սուլթանումն Պարոն Զայալն: Դարձեալ յիշեցէք ըղձայ Ֆռանդուլն եւ զկո-

8) A Chronicle of the Carmelites in Persia, 1939, London, Vol. I, էջ 245-246:

9) Պատ. Նոր Զուղայու:— էջ 88-89:

10) Պատ. Դաւրիթեցւոյ:— էջ 64: